

«ԱՆՏՐԱՅԻՏ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԿԱՄԱՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԶԱՐԴՈՂ-ՏԵՍԱԿԱՎՈՐՈՂ ԿԱՅԱՆՔԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ԱՆՏՐԱՅԻՏ» ՍՊԸ

տնօրեն



Լ. ՏԵՐ-ԱՎԱԳՅԱՆ

Երևան – 2022թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	8
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	8
1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	8
1.2. Նախատեսվող գործունեության բնութագիրը	20
1.3. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը	20
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	22
2.1. Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը	22
2.2. Ռեյիեֆը, երկրաձևաբանությունը	22
2.3. Կլիմա	22
2.4. Մթնոլորտային օդ	25
2.5. Ջրային ռեսուրսներ	26
2.6. Հողային ծածկույթ	30
2.7. Կենսաբազմազանություն. բուսական և կենդանական աշխարհ	32
2.8. Վտանգված էկոհամակարգեր և բնության հատուկ պահպանվող տարածքներ	35
2.9. Պատմության, մշակույթի և բնության հուշարձաններ և պատմամշակութային միջավայր	35
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	38
3.1 Կոտայքի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը	38
3.2. Ազդակիր համայնքները, ենթակառուցվածքները /առողջապահություն, տրանսպորտային համակարգ, էներգացանց, կրթություն/, հողերի տնտեսական յուրացման բնութագիրը	38
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	42
4.1. Հիմնական բնապահպանական ռիսկերը	42

4.2. Հանքարդյունաբերության ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները -----	42
5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ	
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ-----	43
5.1 Մթնոլորտային օդ -----	43
5.2 Մակերևութային և ստորգետնյա ջրեր -----	44
5.3 Հող -----	44
5.4 Բուսական և կենդանական աշխարհ -----	47
5.5 Պատմամշակութային արժեքներ -----	47
6. Սոցիալական ազդեցություն -----	
54	
7. Բնապահպանական մշտադիտարկումների պլան -----	55
Մշտադիտարկումների քարտեզ -----	
56	
Հավելվածներ -----	57

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության եւ մշակույթի հուշարձաններ) եւ սոցիալական միջավայրի (մարդու առողջության եւ անվտանգության), գործոնների, նյութերի, երեւոյթների ու գործընթացների ամբողջությունը եւ դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջեւ.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի եւ մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական եւ տեխնոլոգիական

վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

ձեռնարկող՝ սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող եւ (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական եւ (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթի ընդունման եւ (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական եւ ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությային փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջապարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (մ^3), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.


պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

«Անտրացիտ» ՍՊԸ-ն նախատեսում է ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս համայնքի վարչական տարածքում կազմակերպել արտադրություն՝ ավազի և ավազակոպճազլաքարային խառնուրդի լվացող-տեսակավորող կայանքի տեղադրմամբ:

Նախատեսվող տեղամասը արտադրության կազմակերպման տեսակետից ունի բարենպաստ դիրք, հարևանությամբ անցնում են ճանապարհներ, միաժամանակ գտնվում է բնակավայրերից բավականին մեծ հեռավորությունների վրա, այսպես՝ այն Կամարիս գյուղից գտնվում է 1700մ, Գեղաշենից՝ 150մ և Զովքից՝ 1600մ հեռավորությունների վրա:



Հայցվող տեղամասի տեղադիրքը: Հատված 1:25000 մասշտաբի քարտեզից:



Հատված Google Eart քարտեզից, հայցվող տեղամասի տեղադիրքի ցուցադրումով:
Հայցվող տեղամասի անկյունային կետերի կոորդինատներն են.

1. Y =8475658.5 X =4453887.3
2. Y =8475498.4 X =4454059.6
3. Y =8475465.5 X =4453919.9
4. Y =8475468.0 X =4453811.8
5. Y =8475499.6 X =4453759.9

$$S = 3.0\text{հա}$$



Հայցվող տեղամասի ընդհանուր տեսքը:

Տարածքը, որտեղ նախատեսվում է կազմակերպել արտադրությունը, իր մեջ ներառում է «Անտրացիտ» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրված՝ 07-035-01660062 կադաստրային ծածկագրով 3.008 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 29102021-07-014 վկայական), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային, տրանսպորտի գործառնական նշանակության 0.0465 հա հողամաս:

Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախատեսվում է՝

- Լվացնող-տեսակավորող կայանքի տեղադրում:
- Օգտակար հանածոյի (ավազակոպճագլաքարային խառնուրդի) գանգվածի տարանջատում ըստ ֆրակցիաների, պահեստավորում և սպառում:
- Արտադրական հրապարակում կոնտեյներային տիպի տնակների տեղադրում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հայտը մշակվել է գործող նորմերի, ՀՀ բնապահպանական օրենսդրության, ՀՀ Կառավարության որոշումների, նախարարների հրամանների, գործող մեթոդականությունների հիման վրա:

1.1.1. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները


Հումքի բնութագիրը. Կայանքին սպասարկելու է Գեղաշենի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը: Հանքավայրի պաշարները ապահովելու են արտադրամասի անխափան աշխատանքը:

Գեղաշենի ավազակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրից ստացվող խճի և ավազի պիտանիությունը շինարարական աշխատանքներում պարզելու նպատակով, 34 նմուշների փորձարկման ընթացքում ստացված արգասիքներից տարանջատվել են խիճը և ավազը ու ենթարկվել ֆիզիկամեխանիկական փորձարկումների:

Ֆիզիկամեխանիկական փորձարկումների արդյունքները հետևյալն են.

Ավազ		
Ծավալային կշիռը	կգ/մ ³	1366
Ավազի խումբը		Մանրա, միջա և խոշորահատիկ
Կավի պարունակությունը	%	0.07
Փոշե և կավե հատիկների պարունակությունը	%	2.6
Այլ միացություններ		բացակայում են
Օրգանական միացություններ		բացակայում են
Խոշորահատիկային մոդուլը		3.35
Խճի պարունակությունը տոկոսը		19.4
Ավազի պարունակության տոկոսը		80.6
Խիճ		
Ծավալային կշիռը	կգ/մ ³	1208
Նվազագույն տրամագիծը /20/		53.17
Առավելագույն տրամագիծը /40/		29.26
Փոշե և կավե հատիկների պարունակությունը	%	0.8
Կավի պարունակությունը	%	0.04
Խճի խումբը ըստ հատիկների տեսքի		մասնիկանման
Խճի ամրության սահմանը չոր վիճակում	կգ/մ ²	5.2
Թույլ հատիկների պարունակությունը խճում	%	28.8
Ավազի ելքը	%	80
Տեխնոլոգիական գործընթացի նկարագրությունը.	Գեղաշենի	

ավագակոպճագլաքարային խառնուրդի հանքավայրից ներկրվող օգտակար հանածոյի՝ ըստ ֆրակցիաների դասակարգման համար նախատեսվում տեղադրել GIL-52 մակնիշի GROXOT տիպի տեսակավորող կայանք:



Կայանքի ընդհանուր տեսքը

Հումքը Գեղաշենի հանքավայրից բեռնատար մեքենաներով տեղափոխվում և բեռնաթափվում է արտադրամասի ընդունման հարթակում, որտեղից բեռնիչի միջոցով տրվում է տեսակավորող կայանքի բունկերին:

Հումքը արտադրական հրապարակում կայանքի լվացնող սարքի օգնությամբ լվացվում է, ինչի արդյունքում այն ազատվում է կավային մասնիկներից, որոնք կազմում են տեսակավորվող զանգվածի մինչև 3%: Լվացումից հետո, դասակարգիչի օգնությամբ, ավազը կարող է բաժանվել 3 ֆրակցիայի՝ 0-5մմ, 5-10մմ և 10մմ-ից բարձր:


Դասակարգված ավազների խոնավությունը կազմում է 60%:

Անջատված կավը (մինչև 3%) խյուսի տեսքով ուղարկվում է 3*3*2.5մ չափերով պարզարան: Պարզարանից մաքրված ջուրը վերադառնում է դասակարգիչ:

Տիղմային նստվածքը պարբերաբար հեռացվում է պարզարանից, նրա խոնավությունը կազմում է 80%: Տիղմային նստվածքը կարող է հանդիսանալ պոտենցիալ

բուսահող և սպառման բացակայության դեպքում տեղափոխվելու է Գեղաշենի ազլկի-ի հանքավայրի մակաբացման ապարների լցակույտ:

Աշխատանքների կազմակերպման սխեմատիկ պատկերն հետևյալն է.



Բնական չորացում

Ստացված արտադրանքը պահեստավորվում է առանձին՝ ըստ ֆրակցիաների, դրանց համար նախատեսված պահեստներում, որոնք իրենցից փաստացի ներկայացնում են լցակույտեր, որտեղից այն տրամադրվում է սպառողներին:

Համակարգն աշխատելու է լրիվ շրջանառու ցիկլով, թարմ ջուրը պահանջվում է շրջանառու համակարգից ջրի կորուստը լրացնելու համար:

Թարմ ջրի օգտագործման համար նախատեսվում է մաքրել արտադրամասի մոտակայքում գտնվող խորքային հոր, որը կբավարարի արտադրամասի անխափան աշխատանքների համար անհրաժեշտ ջրի պահանջը: Ջրօգտագործման համար անհրաժեշտ թույլտվությունների ձեռքբերման գործընթացը ընկերության կողմից կիրականացվի:

Արտադրամասի արտադրողականությունը. Համաձայն GIL-52 տեսակավորող կայանքի տեխնիկական ցուցանիշների, կայանքի արտադրողականությունը կազմում է $135\text{մ}^3/\text{ժամ}$ կամ $1080\text{մ}^3/\text{հերթափոխ}$:

Արտադրամասի աշխատանքները նախատեսվում է կազմակերպել շուրջ տարվա աշխատանքային ռեժիմով: Աշխատանքային օրերի թիվը տարվա մեջ ընդունվում է 260 օր, օրական մեկ 8-ժամյա աշխատանքային հերթափոխով:

Կայանքի տարեկան արտադրողականությունը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q_{տ} = Q_h \times N_{տ} \times K_{տ} , \text{ մ}^3$$

որտեղ,

Q_h - կայանքի հերթափոխային արտադրողականությունն է,

$N_{տ}$ - տարվա ընթացքում կայանքի աշխատանքային հերթափոխերի քանակն է, 260

$K_{տ}$ - գործակից է, որը հաշվի է առնում կայանքին անհրաժեշտ պլանա-արտադրական վերանորոգումները, $K_{տ} = 0.85$

$$Q_{տ} = 1080 \times 260 \times 0.85 = 238680.0 \text{ մ}^3$$

Արտադրամասի տարեկան և հերթափոխային արտադրողականության հաշվարկը բերվում է աղյուսակում՝

N	Անվանումը	Չափ. միավորը	Տարեկան	Օրեկան (հերթափոխային)
1.	Ագլկի	մ ³	238680.0	1080.0

Արտադրական հրապարակ. Արտադրական հրապարակում աշխատակիցների կարիքների համար տեղադրվելու են.

վագոն գրասենյակ,

վագոն հանդերձարան,

ջրի տարողություն,

վառելիքի տարողություն,

Կենցաղային կեղտաջրերի տեղադրման համար նախատեսված բետոնային անջրաթափանց լցարան: Կեղտաջրեր առաջանում են միայն խմելու կենցաղային

ջրօգտագործման արդյունքում: Կենցաղային կեղտաջրերը համապատասխան կազմակերպությունների կողմից, պայմանագրային կարգով, պարբերաբար կհեռացվեն:

Արտադրամասը զբաղեցնելու է 3.0հա տարածք, ժամանակին դրա որոշ մասը՝ շուրջ 1.0հա մակերեսով օգտագործվել է որպես արտադրական հրապարակ, դրանցում հողի շերտը խախտված է: Արտադրության դադարեցումից հետո տարածքում հողերի վերականգման աշխատանքներ չեն կատարվել: Հայցվող տարածքում, մինչև արտադրական սարքավորումների և այլ ենթակառուցվածքների տեղադրումը՝ բուլդոզեր-բարձիչի համալիրի օգնությամբ կուտակվում, այնուհետև աշխատանքների համար նախատեսվող տարածքից հեռացվում է հողաբուսական շերտը և կուտակվում արտադրամասի հարավային եզրագծում: Հեռացվող հողաբուսական շերտի ծավալը կկազմի շուրջ 300.0մ³, որի հեռացումը բացահանքի տարածքից կատարվելու է ՀՀ կառավարության 08.09.2011թ-ի թիվ 1396-ն և 02.11.2017թ-ի թիվ 1404-ն որոշումների պահանջներին համապատասխան: Մասնավորապես, ՀՀ կառավարության 08.09.2011թի թիվ 1396-ն որոշումը սահմանում է,

«2. Բերրի շերտի արդյունավետ օգտագործումը ներառում է նաև դրա հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:

3. Բերրի շերտը հողային ծածկույթի վերին շերտի բուսահողն է, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով: Այն կարող է օգտագործվել նաև ջերմոցային տնտեսությունների վարման նպատակներով:

4. Հողամասերի սեփականատերերը, օգտագործողները պարտավոր են հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս իրականացնել բերրի շերտի հանումը, պահպանումն ու օգտագործումը:

.....

9. Այն դեպքերում, երբ հողամասը ենթակա է վերականգնման (օգտակար հանածոների արդյունահանում, երկրաբանահետախուզական և այլ ժամանակավոր աշխատանքներ), ապա բերրի շերտը տեղափոխվում և պահպանվում է վերականգնվող հողամասի մոտ, որպես կանոն, գյուղատնտեսության համար ոչ պիտանի հողերի վրա»:

ՀՀ կառավարության 02.11.2017թ-ի թիվ 1404-Ն որոշման գործողությունը տարածվում է ՀՀ տարածքում իրականացվող շինարարական և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքների կատարման ընթացքում հողի բերրի շերտի հանման և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի օգտագործման վրա:

Հողի հանված բերրի շերտի նկատմամբ ներկայացվում են հետևյալ պահանջները.

«15. Հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողի հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով:

16. Լայնակույտերի բարձրությունը և ձևը պետք է բացառի հողատարման գործընթացների զարգացումը:

17. Եթե հողի հանված բերրի շերտը նախատեսվում է պահել 2 տարին գերազանցող ժամկետով, ապա, ողողումը և հողմատարումը կանխելու համար, լայնակույտերի մակերևույթն ու թեքությունները ամրացվում են խոտացանքով կամ այլ եղանակներով: Թույլատրվում է լայնակույտի թեքությունների վրա ցանքսը կատարել հիդրոեղանակներով:

18. Հողի հանված բերրի շերտը լայնակույտերում կարող է պահվել մինչև 20 տարի:

19. Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում կամ ցածր արդյունավետություն ունեցող հանդակներում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով և կոշտ առարկաներով, քարերով, խճով, ճալաքարով ու շինարարական աղբով աղտոտումը»:

Ռեկուլտիվացիոն վերջնական աշխատանքները կկատարվեն արտադրամասի աշխատանքների ավարտին:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների շրջանակներում կկատարվի նաև կենսաբանական ռեկուլտիվացիա:

Աշխատանքների վերաբերյալ մանրամասները կներկայացվեն ՇՄԱԳ հաշվետվությամբ:

1.1.2. Ջրամատակարարումը և ջրահեռացումը

Արտադրամասի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, կայանքի աշխատանքի, ինչպես նաև փոշենստեցման նպատակով աշխատանքային հրապարակների, ավտոճանապարհների և պահեստավորված ավազի կուտակների մակերևույթի ջրման համար:

Խմելու ջուր բերվում է կցովի ջրի ցիստեռնով:

Տեխնիկական ջրի օգտագործման նպատակների համար նախատեսվում է արտադրամասի մոտակայքում գտնվող խորքային հորը մաքրել:

Համաձայն երկրաբանական տեղեկատվության, տվյալ հորը բավարարելու է արտադրամասի տեխնիկական ջրի պահանջը: Համապատասխան

ջրօգտագործման իրավունքի ձեռքբերման գործընթացը ընկերության կողմից կկատարվի:

Տնտեսական և խմելու ջրօգտագործման բնութագիրը. խմելու ջրի օրեկան ծախսը հաշվարկված է $25.0\text{լ} (0.025\text{մ}^3)$ մեկ մարդու համար, տեխնիկական ջրցանի համար՝ $0.5\text{լ}/\text{մ}^2$:

Աշխատանքների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ արտահայտությամբ՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

որտեղ՝ n - ԻՏ աշխատողների թիվն է - 1

N - ԻՏԱ ջրածախսի նորման՝ - 0.016մ^3 ,

n_1 - բանվորների թիվն է - 5,

N_1 - ջրածախսի նորման՝ - $0.025\text{մ}^3/\text{մարդ օր}$

T - աշխատանքային օրերի թիվն է - 260օր:

Այսպիսով՝ $W = (1 \times 0.016 + 5 \times 0.025) \times 260 = 36.66\text{մ}^3/\text{տարի}$, միջին օրեկան 0.14մ^3 :

Տեխնիկական ջրի տարեկան ծախսը կազմում է՝

$$Q_{\text{տ}} = q_1 + q_2 + q_3$$

Որտեղ՝ q_1 - մերձատար և մուտքային ավտոճանապարհների ջրման համար պահանջվող ծախսն է; q_2 - աշխատանքային հրապարակի ջրման համար պահանջվող ջրի ծախսն է;

q_3 - կուտակների մակերևույթի ջրման համար պահանջվող ջրի ծախսն է;

Ավտոճանապարհի ջրվող մակերեսը կազմում է՝ $S_1 = 400 \times 8 = 3200 \text{մ}^2$,

Աշխատանքային հրապարակի ջրվող մակերեսը կազմում է՝ $S_2 = 1250 \text{մ}^2$,

Կուտակների մակերևույթի ջրվող միջին մակերեսը կազմում է՝ $S_3 = 1560 \text{մ}^2$,

Տարեկան և շոգ եղանակներով օրերի քանակը կազմում է 160օր, ջրելու հաճախականությունը օրվա ընթացքում ընդունված է 3 անգամ:

$$Q_{\text{տ}} = 160 \times 3 \times 0.5 (3200 + 1250 + 1560) = 1450 \text{մ}^3:$$

Ջրառի իրականացման համար լիազոր մարմնի հետ կկնքվեն համապատասխան ջրօգտագործման պայմանագրեր, որոնցում լիազոր մարմնի կողմից կնշվեն ջրառի վայրերը:

Հատուկ ջրապաշտպան կամ ջրհեռացնող համակարգերի ստեղծման անհրաժեշտությունը բացակայում է:

Արտադրական ջրօգտագործման բնութագիրը.

Շրջանառու ջուր. ըստ փաստացի տվյալների, կավային ֆրակցիայի անջատման համար դասակարգիչ է տրվելու $30 \text{մ}^3/\text{ժամ}$ ջուր: Դասակարգիչն աշխատում է շրջանառու ջրով:

Դասակարգիչը շահագործվում է 260օր/տարի , օրը 8 ժամ:

Ջրի պահանջը կազմում է. $15 \times 8 \times 260 = 62400 \text{մ}^3/\text{տարի}$

Լվացման ենթակա ազլկի-ի տարեկան ծավալը կազմում է 238680մ^3 Շրջանառու ջրի օգտագործման նորման կազմում է.

$$W_{\text{դաս.}} = 62400 / 238680 = 0.26 \text{մ}^3/\text{մ}^3:$$

Թարմ խորքային ջուր. Թարմ տեխնիկական ջուրն ավելացնում են այն քանակով, որը պահանջվում է շրջանառու համակարգից ջրի կորստի լրացման համար:

Շրջանառու համակարգից ջրի կորուստները տեղի են ունենում.

- կավի մասնիկներից լցված ֆրակցիաների հետ,

- դասակարգման գործընթացում տեխնոլոգիական կորուստ,
- պարզեցման ավագանի մակերևույթից՝ բնական գոլորշիացման պատճառով, - պարզարանից հանվող նստվածքի հետ, որի խոնավությունը 80% է:

Շրջանառու ջրի տարեկան կորուստը՝ ըստ փաստացի տվյալների, կազմում է շուրջ 30% կամ 18720 մ^3 , որը և հարկ կլինի լրացնել խորքային հորից:

Թարմ խորքային ջրի օգտագործման նորմը կկազմի.

$$W_{\text{դաս.}} = 18720 / 238680 = 0.08 \text{ մ}^3 / \text{մ}^3:$$

1.2. Նախագծման նորմատիվ-իրավական հիմքը

«Անտրացիտ» ՍՊԸ-ն իր գործունեության ընթացքում առաջնորդվելու է բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության այն պահանջներով, որոնք առնչվում են հանքարդյունահանման ոլորտին և շրջակա միջավայրի պահպանությանը: Դրանք են՝

- 1 ՀՀ Հողային օրենսգիրք
- 2 ՀՀ Ջրային օրենսգիրք
- 3 ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք
- 4 ՀՀ Անտառային օրենսգիրքը
- 5 «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք
- 6 „Կենդանական աշխարհի մասին,, ՀՀ օրենք
- 7 «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք
- 8 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք
- 9 «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության ու օգտագործման մասին» ՀՀ օրենք
- 10 «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը
- 11 ՀՀ կառավարության 2008թ-ի օգոստոսի 14-ի «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-ն որոշում

12 ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-ն որոշում

13 ՀՀ կառավարության 2010 թ-ի հունվարի 29-ի «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-ն որոշում

14 ՀՀ կառավարության 2014 թ-ի հունիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 781-ն որոշում:

15 ՀՀ կառավարության 2011 թ-ի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» թիվ 1396-Ն որոշումը:

16 ՀՀ կառավարության 2017 թ-ի դեկտեմբերի 14-ի «Հողերի ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԽԱԽՏՎԱԾ ՀՈՂԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆ ԸՍՏ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 750-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1643-Ն որոշումը:

17. ՀՀ կառավարության 2018թ-ի սեպտեմբերի 8-ի «ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎԸՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՆՎԱՋԵՅՄԱՆ, ԱՆՎԵՐԱԴԱՐՁ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԼԱՆԱՎՈՐՎՈՂ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 191-Ն որոշումը:

18. ՀՀ կառավարության 2014թ-ի սեպտեմբերի 25-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 1059-Ն որոշումը:

19. ՀՀ կառավարության 2017թ-ի նոյեմբերի 2-ի «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 1404-Ն ռրոշումը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2.1 Նախատեսվող գործունեության գտնվելու վայրը

Նախատեսվող արտադրամասի տարածքը վարչական տեսակետից գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի տարածքում: Կամարիս գյուղից գտնվում է 1700մ, Գեղաշենից՝ 150մ և Զովքից՝ 1600մ հեռավորությունների վրա:

2.2 Ռելիեֆը, երկրաձևաբանությունը

Կոտայքի սարահարթը տարածվում է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտները: Գեղամա լեռնաշղթան կենտրոնական մասում բարձրացած հիմքով լեռնավահան է, մոտ 65 կմ երկարությամբ և 35 կմ լայնությամբ, որի վրա շարված են բազմաթիվ հրաբխային կոներ, այդ թվում ամենաբարձր գագաթ Աժդահակը՝ 3597.3մ բարձրությամբ, ինչպես նաև Սնկատարը 3225.1մ, Սպիտակասարը 3555.7մ, Նազելին 3312մ, Վիշապասարը 3157.7մ, Եռակատարը 2589.6մ, Գեղասարը 3443մ, Ծաղկավետը 3076մ, Մանկունքը 2932.1մ: Հաճախ Գեղամա լեռնաշղթայի մեջ են մտցվում նաև Հաղիս 2529.4մ, Գուրանասար 2299.6մ, Մենակսար 2399.4մ, Մեծ Լճասար 2393.8մ, Փոքր Լճասար 2334.2մ, Արմաղան 2829.1մ և այլ հրաբխային լեռնագագաթներ, որոնք բավական հեռու են տեղադրված բուն լեռնաշղթայից:

Հարավ-արևմուտքում Կոտայքի սարահարթը աստիճանաբար ցածրանալով ձուլվում է Արարատյան դաշտին, արևելքում առաջացնում է Ավանի գոգավորությունը, ապա Գետառ և Զովեժ գետերի ջրբաժանը: Ունի դեպի արևմուտք և հարավ-արևմուտք ընդհանուր թեքություն, 1200-1500մ բարձրություն, թույլ մասնատված, լավային ալիքավոր մակերևույթ: Տեղ-տեղ բաժրանում են 50-60մ հարաբերական բարձրությամբ մնացորդային բլրակներ և խարամային կոներ:

2.3 Կլիմա

Կլիմայական տեսակետից հայցվող տեղամասի շրջանը մտնում է չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ:

Կլիման փոխվում է ըստ բարձրության՝ տաք-չոր ցամաքայինից մինչև ձյունամերձը: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10°C-ից մինչև 25°C (Աժդահակի գագաթին): Հունվարի միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում -4.55.0°C է, բարձրադիր վայրերում՝ -13.6°C է, հուլիսին՝ համապատասխանաբար +22.2°C և +8.7°C: Օդի բացարձակ մինիմալ ջերմաստիճանը՝ -30°C, իսկ մաքսիմալը՝ +39°C:

Տարեկան տեղումների միջին քանակը 400-800մմ է: Առաջին ձյունը տեղում է դեկտեմբերի վերջին տասնօրյակին և մնում է մինչև մարտ: Քամիների գերակշռող ուղղությունը ամռանը և ձմռանը հարավից, տարեկան միջին արագությունը 1.7մ/վրկ:

Օդի ջերմաստիճանը

Օդ. կայանի անվանումը	Բարձ.ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների.°C												Միջին տար. °C	Բաց. նվազ. °C	Բաց. առավ. °C
		I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Եղվարդ	1336	-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6	-33	39

Օդի հարաբերական խոնավությունը

Օդ. կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %		
	ըստ ամիսների.	Միջին տար. %	Միջին ամսական ժամը 15-ին

	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	XII		Ամեն. ցուրտ ամսվա %	Ամենա շոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Եղվարդ	73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61	66	33

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը.

Օդ. կայանի անվանումը	միջին ամսական Տեղումների քանակը _____ մմ օրական առավելագույն													Ձնածածկույթ		
	ըստ ամիսների.												Տար-կան տասնօրյ ա Բարձ- ը, սմ	Տարվա ձ նածածկույ թովօրերի քան-ը	Չյան մեջ քրի առավե- լագույն քանակը, մ մ	
	I	II	III	IV	V	VI	VII	VII I	IX	X	XI	II				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Եղվարդ	34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	436	68	74	156
	30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	53			

Քամիները.

Վերականգնողական ծրագրի համար	Միջին արագությունը, մ/վ (ունգ) Դրանց ուղղությունը դիտարկելով	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ ըստ ուղղությունների									Անհողմ- ությունների Տիջին ամսական արագությունը, մ/վ Միջին ամսական առագուծումը, մ/վ Ուժեղ քամիներով մեծացած «ո» տարիների ընթացքում	Հաշվարկային արագությունը, որը է մեկ նգամ «ո» տարիների ընթացքում				
			Հյուսիսին	Հյուսիս-Արեւելյան	Արեւելյան	Հարավ Արեւ-վելյան	Հարավ	Հարավ-Արեւմտյան	Արեւմտյան	Հյուսիս Արեւ-մտյան	20		50	100			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18

Եղվարդ	866,0	Խոնավ	6	48	11	3	15	6	9	2	40	1,1	2,6	29	24	29	34
			1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7							
		Ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23	2,6					
			3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1							
		Իուլիս	6	73	4	1	7	4	4	1	11	4,8					
			4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8							
		Խոլորեքնիկ	5	55	6	3	16	8	6	1	31	1,9					
			2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2							

Անարև օրերի քանակը

Բն ակ-ի, օդ-ական կայանի անվանումը	ըստ ամիսների												արև
	Հուն	Փետ	Մարտ	Ապր	Մայ	Հուն	Հուլ	Օգոս	Սեպ	Հոկ	Նոյ	Դեկ	
Հրազդան	5	5	4	2	1	0,3	0,06	0,2	0,3	1	4	7	30

2.4 Մթնոլորտային օդ

2020թ-ին Հրազդան քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 3 նյութերի) միջինից ցածր մակարդակի է՝ մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը 0.63 է (փոշի՝ 0.14, ծծմբի երկօքսիդ՝ 0.25, ազոտի երկօքսիդ՝ 0.25): Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է ազոտի երկօքսիդի աճման, իսկ ծծմբի երկօքսիդի փոշու՝ նվազման տենդենց (աղյուսակ 7): Քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար դիտարկումներն իրականացվել են 17 դիտակետում՝ պասիվ նմուշառման եղանակով: Ընդհանուր առմամբ վերցվել է օդի 1615 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիանները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Աղյուսակ 7. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փառու, ազոտի և ծծմբի երկօքսիդների միջին տարեկան կոնցենտրացիաների (մգ/մ³) փոփոխությունները 2016-2020թթ.

Միացություն	Բնութագրիչ	Տարեթիվ					Տեղեկեց
		2016	2017	2018	2019	2020	
Փոշի	Միջին տարեկան կոնցենտրացիա	0,095	0,180	0,132	0,139	0,014	-0,020
	Փորձանմուշների քանակ	338	354	345	271	353	
Օծմբի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0,031	0,030	0,028	0,013	0,012	-0,006
	Փորձանմուշների քանակ	351	356	355	297	351	
Ազոտի երկօքսիդ	Միջին տարեկան կոնցենտրացիա	0,007	0,007	0,006	0,008	0,014	0,0016
	Փորձանմուշների քանակ	351	354	355	301	353	

Աղյուսակ 8. Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում փառու, ազոտի և ծծմբի երկօքսիդների միջին տարեկան կոնցենտրացիաները, 2020թ.

Միացություն	Նիտակայան	Միջին տարեկան կոնցենտրացիա, մգ/մ³	Փորձանմուշների քանակ
Փոշի	1	0,174	350
Օծմբի երկօքսիդ	1	0,012	351
Ազոտի երկօքսիդ	1	0,014	353

Մթնոլորտային օդի մոնիթորինգի դիտակայան Կամարիս գյուղի մոտակայքում չկա, սակայն համաձայն «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկի՝ կարելի է ընդունել տարածքի օդի ֆոնային աղտոտվածության հետևյալ ցուցանիշները.

- Փոշի՝ 0.2մգ/ մ³,
- Օծմբի երկօքսիդ՝ 0.02մգ/ մ³,
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008մգ/ մ³ , - Ածխածնի օքսիդ՝ 0.4մգ/ մ³:

Աղմուկի մակարդակ.

Արտադրամասի տարածքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն քանի որ դրանց ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

Արտադրամասի տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող ներմերի):

Հաշվի առնելով արտադրամասի հեռավորությունը բնակավայրերից, մեկ հերթափոխով աշխատանքային ռեժիմը՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը բնակավայրի սահմաններում կգտնվի նորմայի սահմաններում (նորման 45դԲԱ):

Աղմուկի ազդեցությունը կանխելու նպատակով մշակել ժամանակացույց, գիշերային աշխատանքը արտադրամասի տարածքում, խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:

2.5 Ջրային ռեսուրսներ

Մարզի ջրային ավազանը բավականին հարուստ է: Մարզի տարածքով են հոսում Հրազդան, Մարմարիկ, Մեղրաձոր, Ծաղկաձոր, Դալար, Արջաձոր, ինչպես նաև Գետառ և Ագատ գետերը:

Այստեղ են գտնվում նաև Ակնա լիճը, Սևաբերդի, Մարմարիկի և Ախպարայի ջրամբարները:

Ստորև ներկայացվում են գետերի, լճերի և ջրամբարների համառոտ բնութագրերը.

Գետեր

Անվանումը	Ջրավաք մակերեսը /քառ.կմ/	Երկարություն ը /կմ/
Հրազդան	2560	141
Մարմարիկ	427	42
Մեղրաձոր	104	15
Դալար	90	14
Արջաձոր	21	11

Լճեր և ջրամբարներ

Անվանումը	Ծավալը (մլն.մ³)	Հայելու մակերեսը (հա)	Բարձր.ծովի մակ. /մ./
Ախպարայի ջրամբար	2.5	55	1695
Մարմարիկի ջրամբար	24	180	1903
Սևաբերդի ջրամբար	6	37	2000
Սագերի լիճ /Ղազի Գյուլ/	0.25	6.5	2202
Ակնա լիճ	5	50	3030
Բազմալիճք լիճ /Բիշար/	0.24	2.9	3066
«Լուսնալիճ» լիճ /Զեյնալ/	0.11	1.25	2989

Մարզը հարուստ է իր քաղցրահամ ջրերի աղբյուրներով /Գառնիի, Կաթնաղբյուրի, Սուլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի/, որոնք խմելու ջրով ապահովում են ոչ միայն մարզի բնակավայրերը, այլ նաև Երևան քաղաքը:

Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոգերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվող մակերևութային ջրերի մոնիթորինգի դիտացանցում ընդգրկված է Հանրապետության 6 ջրավազանային կառավարման տարածքի (Հյուսիսային, Ախուրյան, Հրազդան, Սևան, Արարատյան, Հարավային) ջրային օբյեկտների (գետեր, ջրամբարներ, Արփա-Սևան ջրատարը և Սևանա լիճը) 144 դիտակետ: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ), տարեկան 5-12 անգամ հաճախականությամբ: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշման:

Ստորև ներկայացվում է 2020թ-ի 4-րդ եռամսյակում Հրազդան գետի ջրի որակի մոնիթորինգի արդյունքները:

Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք


Մակերևութային ջրերի որակ


Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Հրազդան գետի գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում ջրի որակը հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև հատվածում հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), դեկտեմբերին՝ «վատ» (5-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):





Երևակման տարածքով կամ դրա մոտակայքով մշտապես հոսող գետերը կամ գետակները բացակայում են: Ռելիեֆի ցածրադիր վայրերում, կապված գարնանային ձնհալի կամ աշնանային տեղումների հետ, կարող են առաջանալ ժամանակավոր սեզոնային ջրային հոսքեր: Հանքավայրին ամենամոտ մշտապես հոսող գետային ցանց է հանդիսանում Հրազդան գետը Մարմարիկ վտակով, որը գտնվում է հայցվող տարածքից շուրջ 10կմ հեռավորության վրա: Հարկ է նշել, որ Երևակման տարածքում, մոտակա 9-10կմ հեռավորությամբ բացակայում են նաև ջրամբարները, լճերը կամ լճակները:

2.6 Հողային ծածկույթ

Կամարիս գյուղի շրջանում գերակշռում են լեռնատափաստանային և լեռնաշագանակագույն լանդշաֆտները, բարձրադիր մասերում՝ ենթալպյան լեռնամարգագետնային, սևահողանման ու դարչնագույն հողերը, որոնց ենթատիպերի տարածումը ներկայացված է ստորև նկարում: Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, երոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:

Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հողաշերտի հզորությունը միջին հաշվով տատանվում է 30-50սմ-ի սահմաններում, ռելիեֆի իջվածքային մասերում հաճախ այն հասնում է 65-70սմ-ի: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Այս տիպի հողերը բնութագրվում են հետևյալ քիմիական և ջրաֆիզիկական հատկություններով:

Հողատիպը և ենթատիպը	Հորիզոնը և խորությունը սմ	Տոկոսներով			Կլանված կատիոնների գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
		հումուս	ընդհանուր			
			CO ₂	Գիպս SO ₄		
Մուգ շագանակագույն	0-15	3.2	1.4	0.0	33.1	7.9
	15-34	2.1	7.3	0.0	31.5	8.4
	34-73	1.6	16.5	0.1	30.1	8.3
	73-105	1.0	15.7	0.1	29.7	8.3
	105-155	0.8	17.7	0.1	25.8	8.4
Բաց շագանակագույն	0-25	2.4	4.4	0.0	29.4	8.1
	25-39	1.4	8.4	0.5	28.8	8.4
	39-85	1.2	15.4	1.0	24.4	8.2

Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Շագանակագույն հողերի ծավալային զանգվածը տատանվում է 1.24-1.48գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.50-2.65գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 4.38-52.1, խոնավությունը՝ 20-30%-ի սահմաններում: Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Տարածքում առկա են ձևավորված ենթակառուցվածքներ, ճանապարհներ: Մակերեսը քարքարոտ է: Հողերը ներկայացված են բաց շագանակագույն գենետիկական տիպով: Բնութագրվում են ցածր որակական հատկություններով, գրանցվել է կարբոնատների զգալի պարունակություն (գիպսի պարունակությունը մինչև 0.25%):

Հողերը ծանր կավավազային մեխանիկական կազմ ունեն:

Հայցվող տեղամասի տարածքի հողերը ըստ նպատակային նշանակության՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային, տրանսպորտի գործառնական նշանակության են:

2.7 Բուսական և կենդանական աշխարհ

Բուսականությունը: Արտադրամասի համար նախատեսվող տարածքը պատված է լեռնատափաստանային բուսականությամբ, շրջապատված է հացահատիկային դաշտերով: Բուսաաշխարհագրական առումով այն պատկանում է Երևանի ֆլորիստիկ շրջանին: Հիմնական բնական համակեցությունը Օշինդր բուրավետով (*Artemisia fragrans*) կազմված լեռնատափաստանն է՝ տրագականտային գազերի տարրերով (Գազ մանրագլխիկ - *Astracantha microcephalus*, Գազ նապաստակապոչ - *Astragalus lagurus*): Հացահատիկի դաշտերը կազմված են ցորենի (*Triticum aestivum*) և գարու (*Hordeum vulgare*) արտերից: Ներկայումս՝ արտերի միջև գտնվող հատվածներում առկա են դեգրադացված էկոհամակարգեր՝ ինվազիվ ու էքսպանսիվ (Իշակաթնուկ Սեգիերի - *Euphorbia seguieriana*, Խիժաճարճատուկ կնյունանման - *Chondrilla juncea*, Տերեփուկ արևային - *Centaurea solstitialis*, Խոզանափուշ կանաչագլուխ - *Cousinia chlorocephala*) տեսակների մեծ քանակով: Տեղ-տեղ տափաստանային բուսականությունը ընդհատվում է քարացրոնային ազոնալ և երկրորդական բուսականությամբ:

Ըստ հետազոտության արդյունքների, տարածքում հազվագյուտ էկոհամակարգեր չկան:

Կարմիր գրքային և էնդեմիկ տեսակներ: Ըստ հետազոտության արդյունքների, տարածքում Կարմիր գրքային և էնդեմիկ տեսակներ չեն հայտնաբերվել:

Տեղամասի շրջանը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր:

Ընդհանուր առմամբ Գեղաշենի տարածաշրջանում հայտնի են ՀՀ բույսերի Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- ականթ դիոսկորեյանման (*Acanthus dioscoridys* L.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, հայտնի է մեկ պոպուլյացիա, որը աճում է Հատիս լեռան ստորոտում, տեղամասից ավելի քան 5կմ հեռավորության վրա,

- ձագախոտ էգինյան (*Erysimum eginense* Bornm) – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Զառ գյուղի մոտ, տեղամասից մոտ 6.7կմ հեռավորության վրա,

- գառնառվույտ լազիստանյան (*Oxytropis lazica* Boiss.) – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Հատիս գյուղի մոտ, տեղամասից 12կմ հեռավորության վրա:

ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակների հայցվող տեղամասի տարածաշրջանում հատնի են. տոնական գնայուկ (*Poecilus festivus*), նեղ սևամարմին (*Laena constricta*) և հայկական սևամարմին (*Armenohelops armeniacus*) – հազվագյուտ տեսակներ են, հայտնաբերված է Զրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ մոտ 5կմ հեռավորության վրա, ալեքսանոր առագաստաթիթեռ (*Papilio alexanor*) և ավրորինա դեղնաթիթեռ (*Colias aurorina*) – խոցելի տեսակներ են, հայտնաբերված է Զրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա:

Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից թե բույսերի, թե կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելա- և ապրելավայրերը գտնվում են հայցվող տեղամասից մեծ հեռավորությունների վրա: Տեղամասից օգտակար

հանածոյի արդյունահանման աշխատանքները որևիցե կերպ չեն ազդի Կարմիր գրքում գրանցված տեսակների քանակության և արեալների մակերեսների վրա:

Կենդանական աշխարհը. Կենդանիների ուսումնասիրության ժամանակ օգտագործվել են ընդունված մեթոդներ, այդ թվում առավոտյան և երեկոյան ժամերին տաքացող սողունների հաշվառում երթուղիների երկայնքով, թաքստոցների ստուգում: Ցերեկային ակտիվություն ունեցող կենդանիները դիտարկվել են տրանսսեկտային մեթոդով, թաքնված կենսակերպ վարող տեսակներին հայտնաբերելու համար ստուգվել են բոլոր համապատասխան թաքստոցները: Կրծողների ուսումնասիրության նպատակով ստուգվել է դրանց տեղաշարժման արահետների և բների առկայությունը, ինչպես նաև քարերի տակ ժամանակավոր կացարանները:

Արդյունքներ

Հետազոտված տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է սակավաթիվ տեսակներով: Հանրապետության տարածքում լայնորեն տարածված տեսակներից կարող են հանդիպել, կրծողներից՝ հասարակական դաշտամուկը (*Microtus socialis*) և երկկենցաղներից այս տարածքում կարող է հանդիպել Փոփոխական դոդոշը (*Bufo variabilis*), որը նախկինում հայտնի էր Կանաչ դոդոշ անունով:

Եզրակացություն:

Իրականացված հետազոտությունների ընթացքում դիտարկվող տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել:

2.8 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Նախատեսվող արտադրամասի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, բացակայում են:

Տեղամասի շրջանը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր:

Մոտակա բնության հատուկ պահպանվող տարածքներ

ԱՐԳԵԼՈՑՆԵՐ	Կառավարության որոշման համարը	Նպատակը	ՀՀ մարզը	Զբաղեցրած տարածքը (հեկտար)
Էրեբունի	Մինիստրների խորհրդի 1981 թ. N 324	վայրի հացազգիների գենոֆոնդի և աճեցվայրի պահպանություն	Կոտայք	118.75
Խոսրովի անտառ	Մինիստրների սովետի 1958 թ. սեպտեմբերի 13-ի N Պ-341	Ազատ և Վեդի գետերի ավազաններում, լեռնային չորասեր համակեցությունների, մշակովի բույսերի վայրի ցեղակիցների, արիդային նոսրանտառների, Հայաստանի Կարմիր գրքում	Արարատ Կոտայք	23 213,5
		գրանցված կենդանիների ու բույսերի պահպանություն		

2.9 Պատմության, մշակույթի և բնության հուշարձաններ և պատմամշակութային միջավայր.

ՀՀ կառավարության 15.03.2007թ-ի թիվ 385-ն որոշմամբ հաստատվել են ՀՀ Կոտայքի մարզի Կամարիս գյուղի վարչական տարածքում գտնվող ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների հետևյալ ցանկը.

1	2	3
ՉԾձձ ՏՆձձ ^{1/4} ՝	ՍՇԿՅ ³¹³ ճ	·ՍձձՕՇՇ 6 իՍ Նի ⁻³ », Տ ³ Ս ³ ·ՇճՍ ^{31/2} ՝ իՍճձձՍ
ՉԾձձ	ժՇ ³ Շ 3-1 Ն ^{31/2} .	·ՍձձՕՇՇ Նի ⁻³ Ս, ՏժՍ ³ Է ³ Յ ³ ՝ իՍճձձՍ
՝ ³ Ս ³ ճ ³ ճ ³ Յ ³¹³ Յ՝	ժՇ ³ Շ 3-1 Ն ^{31/2} .	
՝Ս ² ճ ³ ՕԷ	ժՇ ³ Շ 3-2 Ն ^{31/2} .	·ՍձձՕՇՇ ՝Ս Ս ³ ձձձՍ
Պ ³ ժ ^{3/4} ժ ² Սձ	18-19 ¹¹ .	·ՍձձՕՇՇ Ս»Շ
Պ ³ ժ ^{3/4} ժ ² Սձ	12-20 ¹¹ .	·ՍձձՕՇՇ Նի ⁻³ Ս Ս ³ ձձձՍ, »ճ»ձ Ս ³ ձձձՅ»ճՇ ԲճՇ ³ իՍձձձՍ
ժ ³ ձձձ ճմ. ՝ձիճ ³ ճՇՅ	1258 Ա.	

6.	«Ծակ քար» բնական թունեղ	Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
7.	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
8.	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
9.	«Անանուն» լանջային էրոզիա	Ազատ գետի աջակողմյան ափերին
10.	«Անանուն» լավային ծալքեր	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
11.	«Անանուն» խորշեր	Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
12.	«Հաղիս» հրաբուխ	Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
13.	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
14.	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
15.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
16.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Զրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
17.	Անանուն» քարե կուտակումներ	Քաղսի գյուղի հվ-արմ եզրին, Հրազդանի կիրճում
18.	«Գուրթանասար» հրաբուխ	Ֆանտան գյուղից 3 կմ հվ
19.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարաբ» գյուղատեղիի մոտ
20.	Զորաղբյուրի (Մանգյուսի) բրածո գյուղ Զորաղբյուր ֆլորա	

Մարզում առկա են նաև ջրաերկրաբանական-5, ջրագրական-4, բնապատմական-1 և կենսաբանական-3 հուշարձաններ՝ հիմք ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում:

Բնապատմական՝

«Ողջաբերդ»	Կոտայքի մարզ, Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
------------	---

Կենսաբանական

«Ռեիկտային կրկես Քյոթոլի»	Կոտայքի մարզ, Արտավազ գյուղի մոտ
«Ալպյան գորգ»	Կոտայքի մարզ, Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)
«Թանթրվենի, Տիգրանի»	Կոտայքի մարզ, Արզնի առողջարանի մոտ, Հրազդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Ջրագրական՝

«Սագերի» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
«Վիշապա» լիճ	Կոտայքի մարզ, Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
«Բազմալիճք» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
«Լուսնալիճ» լիճ	Կոտայքի մարզ, Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ

Ջրաերկրաբանական՝

«Հաղպրտանք» աղբյուր	Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
«Համով» աղբյուր	Կոտայքի մարզ, Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա

«Քաղցր» աղբյուր	Կոտայքի մարզ, Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրազդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
«Չորի» աղբյուր	Կոտայքի մարզ, Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
«Ավազան» աղբյուր	Կոտայքի մարզ, Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա

Այս հուշարձանները գտնվում են արտադրամասից ավելի քան 15կմ հեռավորության վրա:

3.ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

3.1 ՀՀ Կոտայքի մարզի սոցիալ տնտեսական բնութագիրը

Մարզկենտրոնը՝ ք. Հրազդան

Տարածքը՝ 2076 քառ. կմ

Բնակչությունը՝ 254700 մարդ / 2014 թ. հունվարի 1-ի տվյալներով/

Քաղաքային՝ 138000 (54,2%), գյուղական՝ 116700 (45.8%)

Համայնքների թիվը՝ 67, որից քաղաքային՝ 7, գյուղական՝ 60

Սահմանակից է Տավուշի, Գեղարքունիքի, Լոռու, Արարատի, Արագածոտնի մարզերին և մայրաքաղաք Երևանին:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հրազդան գետի ձախակողմյան վտակների մի մասը գետնի տակ ներծծված ջրերի շնորհիվ զարնանը դուրս է ցայտում /շատ լինելու պատճառով դրանց անվանում են <<40 աղբյուր>>/: Կոտայքով են հոսում նաև Գետառն ու Ագատը, որոնք ունեն ոռոգիչ նշանակություն:

Ոռոգման համակարգում մեծ նշանակություն ունի Ակնա լիճը /3032 մ բարձրություն/, որով ջրարբիացվում են ամառային արոտավայրերը: Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային սարավանդները, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Տիրապետող են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան բուսական եւ կենդանական աշխարհներով: Կլիմայական գոտին խառն է, իսկ աշխարհագրական դիրքն, ընդհանուր առմամբ, նպաստավոր: Մարզի տարածքով են անցնում ԵրևանՇորժա և Հրազդան-Իջևան երկաթուղիները, իսկ մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք հեռավորությունն ընդամենը 45 կմ է: Ազգաբնակչության 97,6 %-ը հայեր են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ, ասորիներ, քրդեր, հույներ և այլն:

ՀՀ Կոտայքի մարզը արդյունաբերական տեսանկյունից եղել է Հայաստանի ամենազարգացած մարզերից մեկը:

ՀՀ Կոտայքի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են: Արդյունաբերությունը հանդիսանում է Կոտայքի մարզի տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը: Մարզի արդյունաբերական արտադրության ծավալի ներուժը կենտրոնացված է հիմնականում քաղաքային համայնքներում՝ Հրազդան, Չարենցավան, Աբովյան, Նոր Հաճըն, Եղվարդ, Բյուրեղավան քաղաքներում:

Մարզում մեծ թիվ են կազմում էներգետիկայի, մեքենաշինական, սննդի արդյունաբերության, քարամշակման, հանքարդյունահանման, ձկնաբուծության, շինանյութերի, փայտամշակման և այլ ձեռնարկությունները: Այս ձեռնարկությունների կողմից թողարկվող արտադրանքի մեծ մասն իրացվում է տեղական շուկայում, մյուս մասը արտահանվում է արտերկիր: 2013թ. տվյալներով մարզում գործում են 164 արդյունաբերական ձեռնարկություններ:

ՀՀ Կոտայքի մարզի տնտեսական ներուժին զգալի վնաս հասցրեց նախկինում տասնյակ հազարավոր աշխատատեղեր ապահովող խոշոր կազմակերպությունների քայքայումը՝ սեփականաշնորհման, հումքի, իրացման շուկաների նվազման կամ

բացակայության և հիմնական միջոցների բարոյաֆիզիկական մաշվածության հետևանքով: Մարզի տասնյակ մեքենաշինական, թեթև և սննդի արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրեցին իրենց գործունեությունը կամ էլ սկսեցին աշխատել փոքրածավալ հզորությամբ:

Կոտայքի մարզի գյուղատնտեսական հողատեսքերն ընդգրկում են մարզի ընդհանուր տարածքի 76.8%-ը (154639.9 հա): Մարզը սահմանամերձ չէ և ըստ բնակլիմայական պայմանների բաժանվում է լեռնային և բարձր լեռնային գոտիների: Մարզի 37.8հազ.հա վարելահողերից 2013թ. ընտանեկան (գյուղացիական) տնտեսությունների կողմից օգտագործվել է 17.1հազ. հա, որից 12.1հազ. հա՝ հացահատիկային մշակաբույսերի տակ: Համայնքներում փաստացի չի օգտագործվել 20.7 հազ. հա վարելահող: Չօգտագործվող վարելահողերը հիմնականում գտնվում են բարձրադիր գոտիներում և բնակավայրից զգալի հեռավորության վրա, քարքարոտ են ու դժվարամշակ:

Գյուղատնտեսական նշանակության հողերի, մասնավորապես վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակի բարձրացման գործում անհրաժեշտ է կարևորել պետական մոտեցումը. չօգտագործվող վարելահողերը, որոնք հիմնականում գտնվում են բնակավայրերից հեռու՝ բարձրադիր գոտում և ունեն մեծ թեքություններ, թփակալումների, ճանապարհների վատ լինելու, տեխնիկայի բացակայության, մեկորացիայի ենթակա լինելու, ինչպես նաև հողատերերի բացակայության և ֆինանսական սղության պատճառով հողատարածքները օգտագործվում են որպես խոտհարքներ:

Մակերես՝ 16.49կմ²

Բնակչություն՝ 2294

Համայնքում գործում են՝ 1 դպրոց, 1 մանկապարտեզ, 1 մշակույթի տուն, 1 գրադարան:

Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1530 մ հեռավորությունը մարզկենտրոնից՝ 45 կմ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյուղը Աբովյանից 10 կմ արևելք, Գեղամա լեռնաշղթայի արևմտյան ստորոտին:

Նախկինում կոչվել է Գյամբեզ: Բնակիչների նախնիները եկել են Խոյից ու Բայազետից՝

1829 թվականին և Մակուից՝ 1879 թվականին: Գյուղից հարավ՝ ք.ծ.ա. 3-րդ հազարամյակի ամրոց-շենքն է, որը զբավել է մոտ 8 հա տարածք և բնակելի է եղել մինչև ուշ միջնադար: Ամրոցից մոտ 2 կմ հարավ-արևմուտք կա բրոնզեդարյան դամբարանադաշտ: 18-19-րդ դդ. Կամարիսում կառուցվել է եռանավ բազիլիկ եկեղեցի, որի արտաքին պատերից մեկի վրա կա արձանագրություն Ակոռի գյուղի կործանման վերաբերյալ: Գյուղում և շրջակայքում պահպանվել են Սուրբ Աստվածածին մատուռը, որը վերակառուցվել է 1258 թվականին և 10-17րդ դարերում՝ խաչքարերով գերեզմանատուն: Բնակիչները զբաղվում են հացահատիկի մշակությամբ, անասնապահությամբ:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Հիմնական բնապահպանական ռիսկերը

- Փոշու արտանետումներ և տարածում շրջակա միջավայրում՝ տեխնիկայի աշխատանքի արդյունքում

- Դիզելային վառելիքի այրման արգասիքների արտանետումներ,

- Ավտոտրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում առաջացող աղմուկ,

- Տեխնիկայի շահագործման և կայանման ընթացքում վառելիքի և քսայուղերի արտահոսքեր,

4.2. Ազդեցությունը կրող հիմնական սուբյեկտները

Ա. Շրջակա միջավայրի տարրերը, այդ թվում՝

- Օդային ավազան
- Մակերևութային ջրեր
- Հողային ռեսուրսներ
- Կենսաբազմազանություն

Բ. Բնակչությունը և նրա կենսաապահովման տարրերը՝

- Բնակչության առողջություն
- Բնակչության կենսակերպ

5. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆԸ/ԲԱՑԱՌՄԱՆԸ ԵՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա բնական միջավայրի որակի պահպանության և մարդկանց առողջության անվտանգության երաշխիքը տարբեր ազդեցությունների գիտականորեն հիմնավորված, բնակչության առողջությունը և էկոհամակարգերի անվտանգությունը երաշխավորող սահմանային թույլատրելի մեծություններն են, որոնք հաստատվում և փոփոխվում են ՀՀ շրջակա միջավայրի և առողջապահության նախարարությունների կողմից՝ հաշվի առնելով երկրի բնական պայմանները, գիտատեխնիկական պահանջները, միջազգային ստանդարտները:

Սահմանային թույլատրելի մեծություններն ընդգրկված են ՀՀ նորմատիվտեխնիկական փաստաթղթերի համակարգում և օրենսդրության մաս են կազմում: Այս նորմատիվները պահպանելու դեպքում համարվում է, որ տվյալ գործունեությունը չի խախտում բնական հավասարակշռությունը:

Տնտեսվարողը պարտավոր է գործող նորմատիվներին համապատասխան ապահովել անվտանգության կանոնները՝ կանխարգելող, մեղմացնող միջոցառումների (մաքրող սարքավորումների, վնասազերծող կայանքների, արգելափակող միջոցների, օդափոխության, թափոնների վնասազերծման, սանիտարական գոտիների և այլն) միջոցով:

5.1 Մթնոլորտային օդ

Արտադրամասում աշխատող ավտոտրանսպորտը դառնալու է վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր: Նախնական հաշվարկների համաձայն, տեղամասի տարածքում, ավտոտրանսպորտի աշխատանքի ցածր ակտիվությամբ պայմանավորված, վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Կանխարգելող միջոցառումներով նախատեսվում են՝ սարքավորումների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, գոիչների տեղադրում արտանետման խողովակների վրա:

Աշխատանքային հրապարակների, ավազի կուտակների և ճանապարհների ոռոգում ջրցան մեքենայով, չոր եղանակին՝ օրական 3 անգամ:

Հակահրդեհային միջոցառումների կիրառում:

5.2 Մակերևութային և ստորգետնյա ջրեր

Արտադրամասի աշխատանքի ընթացքում ջրային ռեսուրսները օգտագործվում են դասակարգիչի աշխատանքի, փոշենստեցման, լեռնային զանգվածների խոնավացման, ինչպես նաև սպասարկող անձնակազմի խմելու, կենցաղային և հիգիենիկ նպատակներով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում են հետևյալ միջոցառումները.

- ավազի լվացման համար օգտագործվելու է շրջանառու ջուրը, թարմ խորքային ջուրը օգտագործվելու է միայն շրջանառու ջրի կորուստները լրացնելու համար.
- փոշենստեցման համար ջրցանը իրականացվում է այնպիսի ծավալներով, որ չառաջանա արտահոսք:

5.3 Հող

Հողաձածկույթի աղտոտումը վառելիքաքսուկային նյութերով կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակով՝ բացառելու համար վառելիքի և յուղի պատահական արտահոսքը:

Օգտագործված յուղերը հավաքել մետաղյա տակառներում և պահպանել հատուկ առանձնացված տեղերում /օրինակ՝ վառելիքաքսուկային նյութերի պահեստում/ հետագա ուտիլիզացման նպատակով:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները պետք է կատարել միայն այդ նպատակով նախատեսված արտադրական հարթակներում:

Հողի աղբոտումը կանխելու նպատակով արտադրական հարթակում և աշխատակիցների հանգստյան վայրերում տեղադրվելու են աղբամաններ:

Առաջացած մետաղի թափոնը /անօգտագործելի պահեստամասեր և անվադողեր/ նախատեսվում է հավաքել և իրացնել համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպություններում:

Արտադրամասի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերը ու կենցաղային աղբը:

Շահագործման փուլում առաջացող թափոնները ներառում են.

- Շարժիչների բանեցված յուղեր, 1.19տ/տարի՝
դասիչ՝ 5410020102033
բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ
միացություններ, բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և
ջրի
աղտոտում:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում:

- Դիզելային յուղերի մնացորդներ, 0.9տ/տարի՝

դասիչ՝ 5410030302033

բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ
միացություններ, բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և
ջրի

աղտոտում:

Թափոնները առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում:

Օգտագործված յուղերը ու քուկները հավաքվում են առանձին տարրաների մեջ և
հանձնվում վերամշակման կետեր:

- Բանեցված ավտոդողեր, 0.6տ/տարի՝

դասիչ՝ 5750020213004

բաղադրությունը՝ ռետին, մետաղյա լարեր, բնութագիրը՝
հրդեհավտանգ է:

Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների
շահագործման արդյունքում:

Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված
տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար:

- Բանեցված կապարե կուտակիչներ և խոտան, 50կգ/տարի՝

դասիչ՝ 9211010013012

բաղադրությունը՝ կապար պարունակող ցանցեր, կապարի օքսիդներ,
թթուներ, պլաստմասսա, բնութագիրը՝ թունավոր է շրջակա
միջավայրի համար:

Թափոնները առաջանում են ավտոտրանսպորտային միջոցների շահագործման
արդյունքում:

Թափոնները հավաքվում և պահպանվում են իրենց համար նախատեսված
տարածքներում՝ հետագայում վերամշակող ընկերություններին վաճառելու համար:

- Կենցաղային աղբ

Պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, սովարաթուղթը,
տեքստիլը, պլաստմասը և այլն:

Թափոնների առաջացման նորման 0.3մ³/տարի 1 մարդու համար:

Տեսակարար կշիռը՝ 3.6 տ/մ³:

Կազմակերպությունների գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր 91200400 01 00 4 [15]:

Պինդ կենցաղային թափոնները կուտակվում են տարածքում առկա աղբամանների մեջ:

5.4 Բուսական և կենդանական աշխարհ

Արգելվում է ցանկացած գործունեություն, որը կհանգեցնի Հայաստանի Հանրապետության կենդանիների և բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակների թվաքանակի կրճատմանը և դրանց ապրելավայրերի վատթարացմանը: /ՀՀ Կենդանական աշխարհի մասին օրենք, 03.04.2000թ հոդված 18. կետ բ, ՀՀ Բուսական աշխարհի մասին օրենք 23.11.1999 թ հոդված 17/:

Բացառվում է տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տարածքներից դուրս:

Բնապահպանական միջոցառումներ

- Տարածքի հողերը, որտեղ նախատեսվում է կազմակերպել արտադրությունը, ըստ նպատակային նշանակության արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության են:
- Նոր տարածքներ չեն խախտվելու:
- Վնասակար գազերի ու անօրգանական փոշու արտանետումները լինելու են նվազագույն:
- Ավազի լվացումը իրականացվելու է ջրի շրջանառու համակարգով: Թարմ ջուրը ծախսվելու է միայն շրջանառու համակարգի լրասնուցման համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահատել 500.0հազ. դրամ:

5.5 Պատմամշակույթային արժեքներ

Հայցվող տեղամասում պատմամշակութային նշանակություն ունեցող և մարդու գործունեության արդյունք հանդիսացող պատմական հետաքրքրություն ներկայացնող կառույցների, շինությունների, գերեզմանների, իրերի և այլնի հայտնաբերման դեպքում ՀՀ օրենսդրության պահանջով նախատեսվում է դադարեցնել դրանց տարածքում արդյունահանման աշխատանքները, այդ մասին տեղեկացնել պետական լիազորված մարմին և հրավիրել համապատասխան մասնագետներ, որոնց օգնությամբ կկատարվի հայտնաբերված հուշարձանների ուսումնասիրություն, կոնսերվացում, անհրաժեշտության դեպքում՝ տեղափոխում:

5.6 Սոցիալական ազդեցություն

Աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը:

Աշխատակազմը պետք է ունենա խմելու որակյալ ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում, հասանելի վայրում, պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովվի համազգեստով և անվտանգության անհրաժեշտ միջոցներով:

Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Նախաձեռնության հեղինակները պարտավոր են կատարել սոցիալական միջոցառումների պլանը ամբողջությամբ:

Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթություն է տրվելու տեղի բնակչությանը:

Նախատեսվում կազմակերպել երիտասարդների ուսուցում, իսկ մյուս աշխատողները կանցնեն վերապատրաստում:

Արտադրամասի աշխատանքի ընթացքում հնարավոր են վթարային իրավիճակներ, բնական աղետներ և անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար ընկերությունը մշակել է գործուղությունների ծրագիր, որը ներառում է մի շարք համապատասխան միջոցառումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններում, որոնք նպաստում են գետնամերձ շերտում վնասակար նյութերի կուտակմանը, ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ, սակայն դրանց հստակ չափորոշիչները բացակայում են և դրանք որոշվում են հետևյալ սկզբունքների հիման վրա՝

- I. Քամու արագության նվազում,
- II. Անհողմություն, չոր եղանակ,
- III. Անհողմություն, թանձր մառախուղ:

Նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝ I.

Ավելացվում են ջրցանի ծավալները:

II. Կրճատվում է միաժամանակյա աշխատող մեխանիզմների քանակը:

Սանիտարա-պաշտպանիչ գոտի

Լրացուցիչ սանիտարա-պաշտպանիչ միջոցառումների անհրաժեշտությունը բացակայում են:

Աղմուկ

Արդյունահանման աշխատանքների ընթացքում օգտագործվող տեխնիկան շահագործելիս առաջանում է աղմուկ:

Աշխատանքային հրապարակում առաջացող աղմուկի նվազեցման նպատակով մեքենաները պետք է սարքավորված լինեն ձայնախլացուցիչներով, որպեսզի աղմուկի մակարդակը բնակելի գոտում չգերազանցի ՀՀ գործող նորմերը:

Բնակելի տարածքում աղմուկի մակարդակի նորման կազմում է 45 դԲԱ:

Արդյունաբերական սանիտարիան և անվտանգության տեխնիկան

Աշխատանքի վայրում աշխատողների առողջության պահպանումն ու անվտանգության ապահովումը աշխատանքային հարաբերությունների կարևորագույն բաղադրիչներից է: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ «Յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք»: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը սահմանում է, որ յուրաքանչյուր աշխատողի աշխատավայրը և շրջապատող միջավայրը պետք է լինեն անվտանգ, հարմար և առողջության համար անվնաս, կահավորված՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Այդ ամենը պարտավոր է ապահովել գործատուն:

Աշխատողների անվտանգությունը եւ առողջությունը աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի եւ

առողջության պահպանման համակարգն է, որը ներառում է իրավական, սոցիալ-տնտեսական, կազմակերպական-տեխնիկական, սանիտարահիգիենիկ, բուժկանխարգելիչ, վերականգնողական եւ այլ միջոցառումներ:

Աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է ստեղծվեն օրենքով սահմանված՝ պատշաճ, անվտանգ եւ առողջության համար անվնաս պայմաններ:

Աշխատողների առողջության եւ անվտանգության պահպանությունը պարտավոր է ապահովել գործատուն: Հաշվի առնելով կազմակերպության մեծությունը, աշխատողների համար արտադրության վտանգավորության աստիճանը՝ գործատուն կազմակերպությունում ներգրավում է աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման որակավորված ծառայություն կամ այդ գործառույթն իրականացնում է անձամբ:

Արտադրամասի բոլոր աշխատանքները պետք է կատարվեն անվտանգության միասնական կանոններին (ԱՄԿ) և տեխնիկական նորմերին (ՇՏԿ) համապատասխան:

Անվտանգության ապահովման կանոններից կարելի է նշել.

- աշխատանքի ընդունվող բոլոր բանվորները և ծառայողները պարտավոր են անցնել բժշկական ստուգում,
- արտադրամասի ինժեներա-տեխնիկական աշխատողները պարբերաբար, ոչ ուշ քան 3 տարին մեկ, պետք է անցնեն գիտելիքների ստուգում,
- յուրաքանչյուր բանվոր, անվտանգության տեխնիկայի գծով նախնական ուսուցումից հետո, պետք է անցնի ըստ մասնագիտության ուսուցման և հանձնի քննությունները,
- աշխատանքային յուրաքանչյուր տեղ աշխատանքներն սկսելուց առաջ հերթափոխի պետի կողմից պետք է կատարվի զննում: Աշխատանքներն սկսվելու համար պետք է տրվի գրավոր առաջադրանք,
- յուրաքանչյուր բանվոր, մինչ աշխատանքը սկսելը, պետք է համոզվի իր աշխատատեղի անվտանգության ապահովումը,

Լեռնատրանսպորտային սարքավորումները պետք է թույլ տան աշխատել միայն այն դեպքում, եթե նրանք սարքին են և աշխատում են նրանց վրա դրված գազերի թունավոր խառնուրդների չեզոքացման ու փոշեզրկման սարքերը:

Աշխատողների ջրամատակարարման համար նախատեսվում է կցիչ

ցիստեռն:

Արտադրական հրապարակում աշխատողների համար նախատեսվում են սանիտարակենցաղային հարմարություններ, որոնց կազմակերպումը նախատեսվում է իրականացնել ՀՀ առողջապահության նախարարի 2012թ-ի սեպտեմբերի 19-ի թիվ 15-ն «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը» հրամանով: Համաձայն վերոնշյալ հրամանի՝ սանիտարակենցաղային հարմարություններն են հանդիսանում՝ հանդերձարանը, ցնցուղարանը, զուգարանը և հանգստի սենյակը: Սանիտարակենցաղային հարմարություններին ներկայացվող պահանջներից են.

Հանդերձարանին ներկայացվող պահանջներն են.

1) արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններից զերծ կազմակերպություններում, անձնական հագուստի պահպանման հանդերձարանները կահավորվում են բաց հանդերձապահարաններով, կամ կախիչներով՝ ամենամեծ հերթափոխում աշխատող անձանց թվին համապատասխան,

2) արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական) և աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններով առկա կազմակերպություններում, անձնական հագուստի և աշխատանքային հագուստի պահպանման հանդերձարանները կահավորվում են փակվող դռներով երկտեղանոց հանդերձապահարաններով՝ ամենամեծ հերթափոխում աշխատող անձանց թվին համապատասխան, 3) իրականացվում է ջեռուցում և բնական օդափոխություն:

4) Հանդերձարանը նախատեսված է անձնական (դրսի և տնային) և աշխատանքային հագուստի պահպանման համար:

Ցնցուղարանին ներկայացվող պահանջներն են.

- 1) ցնցուղների թիվը սահմանվում է յուրաքանչյուր 7 մարդուն մեկ ցնցուղ հաշվարկով,
- 2) ցնցուղների թիվը չի գերազանցում 30-ը,
- 3) իրականացվում է բնական օդափոխում:
- 4) Ցնցուղարանը ներառվում է աշխատանքային միջավայրի վնասակար և վտանգավոր (ֆիզիկական, քիմիական, կենսաբանական), ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններով առկա կազմակերպությունների սանիտարակենցաղային հարմարությունների կազմում և տեղակայվում է կից:

Լվացարանին ներկայացվող պահանջներն են.

- 1) սարքավորվում է արմնկային կամ ոտնակային կառավարման հարմարանքներով՝ վտանգավոր, մաշկի միջոցով օրգանիզմ թափանցող, խիստ հոտավետ նյութերի ինչպես նաև ստերիլ նյութերի արտադրության կազմակերպություններում,
- 2) ապահովվում է հոսող ջրով, կախիչով, հեղուկ օձառով, էլեկտրական սրբիչով կամ միանվագ օգտագործման թղթյա անձեռոցիկներով,
- 3) ծորակների թիվը սահմանվում է յուրաքանչյուր 10 աշխատողին մեկ ծորակ հաշվարկով:

Զուգարանին ներկայացվող պահանջներն են.

- 1) սանիտարատեխնիկական սարքավորումների (զուգարանակոնքերի) թիվը սահմանվում է 15 մարդուն մեկ սանիտարատեխնիկական սարքավորում հաշվարկով,
- 2) նախամուտքում յուրաքանչյուր 4 սանիտարատեխնիկական սարքավորման հաշվարկով տեղադրվում է 1 լվացարան, բայց ոչ պակաս, քան մեկ լվացարան՝ յուրաքանչյուր զուգարանում,
- 3) իրականացվում է ջեռուցում և բնական օդափոխում,
- 4) սանիտարական սարքավորումների թվի 3-ից ավելի դեպքում, զուգարանում տեղադրվում է ներհոս-արտաձիգ արհեստական օդափոխության համակարգ:

- 5) Զուգարանի և հեռավորությունը աշխատատեղերի միջև 50 մետրից ոչ ավելի է:
- 6) Զուգարանի սանիտարական պահպանումն ապահովվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2009 թվականի ապրիլի 16-ի N 06-Ն հրամանով հաստատված «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոնների և նորմերի պահանջների: Հանգստի սենյակին ներկայացվող պահանջներն են.
- 1) կահավորվում է համապատասխան կահույքով, կախիչներով, լվացարաններով, խմելու ջրով,
 - 2) ապահովվում է տաքացման և/կամ հովացման սարքավորումներով:
 - 3) Հանգստի սենյակը նախատեսվում է կազմակերպություններում, որտեղ առկա են սառեցնող և տաքացնող միկրոկլիմայով աշխատատեղեր, ինչպես նաև աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության գործոններ՝ աշխատանքի ընթացքում աշխատակիցների ջերմատվության կարգավորման և աշխատողների հանգստի նպատակով:
 - 4) Սանիտարակենցաղային հարմարությունները տեղադրվում են առանձին սենքերում կամ՝ արտադրություններին հարակից:

6. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Արտադրամասի տարբեր հատվածներում, պատերին պետք է փակցված լինեն տեղահանման քարտեզ-սխեմաներ:
2. Տեղամասում և արտհրապարակում նախատեսվելու են արտաքին հրաշիջման համակարգ:
3. Շինությունը պետք է ունենա հողանցում:
4. Աշխատավայրերում պետք է լինեն կրակմարիչներ, ավազով արկղ, բահ և այլն, նախատեսված է հակահրդեհային ազդասարք:
5. Բոլոր աշխատողները պետք է ապահովված լինեն բանվորական արտահագուստով, կոշիկներով, ձեռնոցներով, ակնոցով և անցնեն հրանգավորում:
6. Մինչև 18 տարեկան մարդկաց աշխատանքը արտադրամասերում արգելվում է:

7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Մթնոլորտային օդի որակի կանոնավոր մոնիթորինգը թույլ կտա արագ արձանագրել և ձեռնարկել համապատասխան միջոցառումներ շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու համար:

Մոնիթորինգի անցկացման նախնական ծրագիրը բերված է աղյուսակում:

Մշտադիտարկումների պլանի կառուցվածքն ու բովանդակությունը

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ*	Արտադրամասի տարածք	- անօրգանական փոշի	նմուշառում, չափումներ՝ ավտոմատ չափման սարքերով. փոշու կոնցենտրացիա – Aerocet 831, կամ նմանատիպ սարքով	Շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Մթնոլորտային օդ*	Մոտակա բնակավայր	- անօրգանական փոշի	նմուշառում, չափումներ՝ ավտոմատ չափման սարքերով. փոշու կոնցենտրացիա – Aerocet 831 կամ նմանատիպ սարքով	Շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	Արտադրակ ան հրապարակ,	Հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Ամսական մեկ անգամ Տարեկան մեկ անգամ

Վայրի բնություն, կենսամիջավա յր	Արտադրամ ասի հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչնե րի քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տարեկան մեկ անգամ
--	-------------------------------	---	---	----------------------

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ.դրամ:

Մտադիտարկումների համար նախատեսվող դիտակետերի տեղադիրքի սխեմատիկ հատակագիծ



Նախատեսվող մշտադիտարկման դիտակետերի կոորդինատներն են.

1. X= 4453950 Y

= 8475605 2. X=

4453780 Y =

8475705 3. X=

4454305 Y =

8476255

Մթնոլորտային օդի համար՝ 1 և 3

Հողային ծածկույթի համար՝ թիվ 1

Կենսաբազմազանության համար՝ 2 և 3

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՍԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 29 հոկտեմբերի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒՐՅԵԿՏ(ՆԵՐ)

«ԱՆՏՐԱՑԻՏ» ՍՊԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Կամարիս Զուլքի խճուղի 1

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ

Հողամասի մրցույթային վարձակալության 06/10/2021թ.ա.մ.7797 պայմանագիր

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-035-0166-0062

Մակերեսի չափը (հա)՝ 3.008

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների
Գրանցված իրավունքի տեսակը՝ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 29102021-07-0145, գաղտնաբառ՝ GP4ZMCA3ICZC

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի
www.e-cadastre.am կայքի միջոցով

Էջ 1/2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻՊՈԴԵՐԵՎՈՒԹԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հիդրոերկրաբանական տեղեկատվություն

(ստորերկրյա ջրային ռեսուրսներից ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար)

Կոտայքի մարզի Կամարիս համայնքի վարչական տարածքի Զովքի խճուղի 1
հասցեում <<Անտրացիտ>> ՍՊԸ-ի կողմից արտադրական նպատակով
օգտագործվող 1 (մեկ) հորատանցքի վերաբերյալ

Նկարագրվող հորատանցքը գտնվում է Կամարիս համայնքի վարչական տարածքի հետևյալ կոորդինատներում՝

$X=40^{\circ}13'05.0''$

$Y=44^{\circ}42'46.8''$

$H = 1662$ մ

Տարածքում օդի բազմամյա միջին տարեկան ջերմաստիճանը 8.7°C է, բազմամյա միջին տարեկան տեղումների քանակը՝ 526 մմ, գոլորշիացումը՝ 400 մմ:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգենի հրաբխածին – նստվածքային (տարատեսակ տուֆոգեններ՝ տուֆոբրեկչիաներ, տուֆոավազաքարեր) և վերին պլիոցեն– չորրորդական հասակի հրաբխային (դացիտներ, անդեզիտներ, բազալտներ, դրանց տարատեսակներ և կլաստոլիտներ) ապարները, որոնք ծածկված են վերին չորրորդական – ժամանակակից մորենաներով (սառցադաշտային նստվածքներ) և էլյուվիալ – դելյուվիալ առաջացումներով:

Ստորերկրյա ջրերի սնման աղբյուրը մթնոլորտային տեղումներն են: Ստորերկրյա ջրերի ձևավորումը կատարվում է ճեղքավոր հրաբխային ապարներում, իսկ շարժումը և կուտակումը՝ միջլավային և լավատակ հնահովիտներով:

Նկարագրվող հորատանցքին բնորոշ է հետևյալ երկրաբանական – հիդրոերկրաբանական կտրվածքը.

0.00 – 18.0 գետաքար – գլաքար, ավազախառն կավերի լցոնով (Q_{3-4})

18.0 – 49.0 անդեզիտաբազալտ, պինդ, թույլ ճեղքավոր, անջուր (Q_3)

49.0 – 83.0 անդեզիտաբազալտի բեկորներ, հրաբխային խարամ, անջուր (Q_{1-3})

83.0 – 90.0 հոծ անդեզիտաբազալտ (Q_{1-3})

90.0 – 115.0 ճեղքավոր անդեզիտաբազալտ, ջրատար (N_2^3-Q)

Ջրերի մակարդակը հորատանցքում վերականգնվել է 65.0մ խորությունում:

Հորատանցքը հորատվել է 346մմ տրամագծով և ամրակապել 219մմ տրամագծի խողովակներով: Ամրակապող խողովակների սյան 90.0 - 110.0մ խորության միջակայքում տեղադրվել է ծակոտկեն զտիչ:

Հորատանցքի 90մ խորությունում տեղադրված է ՅԱԲ-8-65-110 մակնիշի խորքային պոմպ՝ 18.0լ/վ արտադրական հզորությամբ:

Ջրերի ջերմաստիճանը 8.5°C է: Ըստ քիմիական կազմի տեղամասում տարածված են հիդրոկարբոնատային կազմի ջրերը, որոնց ընդհանուր հանքայնացումը 0.41գ/լ է, ընդհանուր կոշտությունը՝ 3.0 մգ.համ/լ, ջրածնային ցուցիչը (рН)՝ -7.8 :

Համաձայն Ջրային օրենսգրքի 19.1 հոդվածի հորատանցքում հիդրոերկրաբանական մշտադիտարկումների վարումը պարտադիր է:

Կազմեց՝ հիդրոերկրաբ. հետազոտ. բաժնի պետ

Ա.Հակոբյան

Ստուգեց՝ գլխավոր հիդրոերկրաբան

Հ. Աղինյան

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Լ.Ազիզյան




06.12.2021թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՀԻՂՐՈՐԴԵՐԵՎՈՒԹԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ
ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

**Անձնագիր N 1047
հորատանցքի**

Կազմման ժամանակը 06.12.2021թ.



I Տեղադիրքը

1. Մարզ- Կոտայքի, տարածաշրջան – Արմավյանի, բնակավայր- Կամարիս, տնտեսություն- <<Անտրացիտ>> ՍՊԸ
2. Ստորերկրյա ջրերի հանքավայր – Գետառ-Ջրվեժի
3. Գետավազան – Հրազդանի
4. Ջրավազանային կառավարման տարածք – Հրազդանի
5. Կոորդինատներ՝ $X=40^{\circ}13'05.0''$ $Y=44^{\circ}42'46.8''$ $H = 1662$ մ
6. Հեռավորությունը մշտական ջրհոսքից (գետից) – 1.5 կմ
7. Տոպոթերթի համարը 1:100000 մշ-ի – K-38-138
8. Հաշվետվության անվանումը – Отч " Экспл. запас. Катнахпюрском м-я " и ներկա դաշտային հիդրոերկրաբանական հետազոտությունների արդյունքները
9. Հաշվետվության հեղինակը – Зайцев И.В., (ПНИИС)
10. Պետական գրանցման համարը 01226

II Երկրաբանական լիթոլոգիական կտրվածքը

Շերտի համարը	Երկրաբանական խմելք	Ծագումը (գնմեզխ)	Տեղադրման խորությունը, մ.		Հորտու-թյունը մ.	Ջրատար հորիզոնի N ^o	Ապարների նկարագրությունը
			առաստաղ	հատակ			
1	Q ₃₋₄	դելուվիալ - պրոլուվիալ	0.00	18.0	18.0	-	գետաքար-գլաքար
2	Q ₃	հրաբխային	18.0	49.0	31.0	-	անդեզիտաբազալտ, ճեղքավոր
3	Q ₁₋₃	հրաբխային	49.0	83.0	34.0	-	անդեզիտաբազալտ, անջուր բեկորներ, անջուր
4	Q ₁₋₃	հրաբխային	83.0	90.0	7.0	-	անդեզիտաբազալտ, հոծ
5	N ₂ ³ -Q	հրաբխային	90.0	115.0	25.0	1	անդեզիտաբազալտ, ճեղքավոր, ջրատար

III Ընդհանուր նկարագրությունը

1. Հորատանցքի խորությունը – 115.0մ
2. Հորատանցքերի վերջնական տրամագիծը – 346մմ
3. Շահագործվող սյան տրամաչափը – 219մմ
4. Հորատման ժամանակը – 1966թ
5. Շահագործման ռեժիմը - ընդհատվող
6. Հորատման նպատակը և շահագործման սկիզբը – արտադրական
7. Ջրերի տիպն ըստ օգտագործման – խմելու - կենցաղային
8. Սանիտարական վիճակը - բավարար
9. Տեխնիկական վիճակը - բավարար
10. Հորատման լուծույթի տիպը - կավային
11. Կավագրկման եղանակը – ջրով լվացում
12. Հորատման եղանակը - պտտտակային
13. Հորատանցքերի թիվը - 1 (մեկ)

IV Ջտիչի բնութագիրը

1. Ջրատար հորիզոնի համարը - 1
2. Ջտիչի տրամաչափը և տիպը – 219.0մմ, ծակոտկեն
3. Ջտիչի տեղադրման խորությունը – 90-110մ

V Ջրատար հորիզոնի բնութագիրը


1. Ջրերի բացահայտման խորությունը – 90.0մ
2. Ջրերի վերականգնման մակարդակը – 65.0 մ
3. Ջրատար հորիզոնի մեկուսացման եղանակը և միջակայքը – ամրակապող խողովակներ, ցեմենտացիա
4. Խորքային պոմպի տիպը և տեղադրման խորությունը – ЭЦВ-8-65-110, 90մ

VI Ջրատար հորիզոնի փորձարկման արդյունքները

1. Արտամղման տիպը և եղանակը –
2. Ծախսը (Q_1 , Q_2 , Q_3) – ըստ պոմպի արտադրողականության 18.0 լ/վ
3. Արտամղման տևողությունը – 2 օր

VII Զրեքի որակը

1. Նմուշարկման ժամանակը – արխիվային տվյալներ
2. Նմուշարկման խորությունը – հորատանցքի բերանից
3. Ջրի ջերմաստիճանը – 8.5°C
4. Ջրածնային ցուցիչը (PH) – 7.8
5. Ընդհանուր կոշտությունը – 3.0 մգ. համ/լ
6. Չոր մնացորդը (փորձնական) – 280 մգ/լ
7. Հոտը - անհոտ
8. Համը - անհամ
9. Գույնը - անգույն
10. Քիմիական տարրերի պարունակությունը
 Cl^- - 71.0, SO_4 - 40.0, HCO_3^{--} - 183.0, $(\text{Na}+\text{K})^+$ - 30.59, Ca^{2+} - 40.08, Mg^{2+} - 30.4
11. Աղային կազմի բանաձևը (ըստ Կուրլովի)



12. Լրացուցիչ տեղեկություններ – Համաձայն Զրային օրենսգրքի 19.1 հոդվածի հորատանցքում հիդրոերկրաբանական մշտադիտարկումների վարումը պարտադիր է:

Կազմեց՝ հիդրոերկրաբ. հետազոտ. բաժնի պետ

Ա. Հակոբյան

Ստուգեց՝ գլխավոր հիդրոերկրաբան

Հ. Աղինյան

ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Լ. ԱԶԻԶՅԱՆ

